քերի մոտ գտնվել են սափորներ, ապակյա ամաններ (արտասվասափորներ, սրվակներ)։ Գտնվել են նաև ոսկրյա բռնիչներ՝ կանանց սանրվածքը պահելու համար, մետաղյա, քարե և ոսկյա զարդարանքներ։ Շիրիմներում գտնվել են նաև մեր թվականության առաջին ու երկրորդ դարերի դրամներ, որոնցից յոթը պատկանում են հռոմեական կայսր Օկտավիանոս Օգոստոսի ժամանակաշրջանին։

Շիրիմներում գտնված իրերը խոսում են այն մասին, որ դեռևս մոտ 2.000 տարի սրանից առաջ Գառնու ամրոցում եղած քաղաքացիական բնակչության կենցաղի մեջ մեծ չափերով թափանցել էր հելլենական կուլտուրան, ինչպես նաև վկայում են հին հայերի մոտ արվեստի և կուլտուրայի զարգացման բարձր մակարդակը։

Եկող տարի Գառնու ամրոցի ուսումնասիրման աշխատանքները կշարունակվեն։

ԴՎԻՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմական թանգարանի հնագիտական արշավախումբն ավարտեց Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք Դվինի ավերակների այս տարվա պեղումները։

Արշավախումբը պատմական գիտությունների թեկնածու Կ. Ղաֆադարյանի ղեկավարությամբ, 1951 թվականին պեղումներ է կատարել գլխավորապես քաղաքի միջնաբերդի կատարին, ստորին բերդի հարավային լանջում, քաղաքի կենտրոնական թաղամասի հարավային բարձունքի վրա և հետախուզական պեղումներ՝ քաղաքի տարբեր ծայրամասերում։

Միջնաբերդի գագաթին, իջնելով անցյալ տարի պեղված վայրի խորքը, արշավախումբը հայտնաբերել է աղյուսաշեն մի մեծ պալատական շինության մնացորդներ։ Գտնված առարկաների հիման վրա պետք է ենթադրել, որ շինությունը 8-րդ դարի է և, ըստ երևույթին, պատկանել է արաբ էմիրներին։

Ստորին բերդում բաց է արվել 10—12-րդ դարերին պատկանող իշխանական մի ապարանք։ Ապարանքը կենտրոնում ունեցել է գմբեթավոր մի մեծ դահլիճ՝ աղյուսե հատակով, թոնրատուն, երկու միջանցք, պահեստներ, տնտեսական կառուցվածքներ և մի քանի բնակելի սենյակներ։ Շենքն ունեցել է ներքին գեղեցիկ հարդարանքներ՝ թևավոր առյուծների և որսի կենդանիների պատկերներով գաջե ձուլածո որմնազարդեր և շքաղյուսե զարդարանքներ։ Այս շինությունը խիստ կարևոր նշանակություն ունի 10—12-րդ դարերի հայ աշխարհիկ ճարտարապետության պատմության հարցերի լուսաբանման համար, որովհետև մինչև օրս աշխարհիկ ճարտարապետության շատ քիչ նմուշներ են հայտնաբերվել։

Քաղաքի կենտրոնական թաղի հարավային մասում արշավախումբը բաց է արել մի մոնումենտալ շենքի անկյուն, որի պեղումները շարունակվելու են եկող տարի։

Պեղումների ընթացքում գտնվել են բազմաթիվ հնագիտական առարկաներ, որոնք տեղեկություններ են տալիս միջնադարյան Հայաստանի քաղաքային կյանքի, արհեստների և առևտրի զարգացման, կենցաղի ու սովորությունների մասին։ Գտնված առարկաների մեջ կարևոր տեղ են գրավում զենքերն ու գործիքները՝ նետերի սլաքներ, երկաթյա նիզակի ծայրեր, սակրեր և շերտավոր զրահի բեկորներ։ Այս վերջինները հետաքրքիր են այն տեսակետից, որ մինչև Դվինի պեղումները Հայաստանում միջնադարյան սակրեր ու զրահի բեկորներ չէին գտնվել։

Արհեստներին վերաբերող առարկաների մեջ կարևոր տեղ են գրավում մետաղաձուլման քուրան և հրակայուն կավից պատրաստված հալոցները, ինչպես նաև պղնձի ու երկաթի մնացորդները։

Գտնված են 50-ից ավելի դրամներ, որոնց մեջ կան արաբական շրջանի արաբական,

բյուզանդական, վրացական և Դվինում կտրված արաբատառ դրամներ։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում քաղաքի կենտրոնական թաղում բացված եղբայրական դամբարանը։ Այդտեղ թաղված են եղել մեծ մասամբ կանայք և երեխաներ, որոնց մարմինների վրա եղած նետասլաքներն ասում են, որ դրանք սպանվածներ են։ Թաղվածների զգեստների մեջ կարված ոսկե և պղնձե դրամներից երևում է, որ սպանությունները կատարվել են 11-րդ դարի 40-ական թվականներին, հավանաբար սելջուկների արշավանքի ժամանակ։

Ինչպես ամեն տարի, այնպես էլ այս տարի գտնված առարկաների մեջ մեծ արժեք են ներկայացնում ապակյա և կերամիկական իրերը, որոնց մեջ կան գեղեցիկ վերադիր զարդերով ափսեներ՝ գունավոր ապակուց և փորագիր քանդակներով գավաթներ։ Առանձնապես արժեքավոր են հախճապակյա իրերի մնացորդները, որոնց մեջ կան ռեյան (իրանական) տիպի բարձրարվեստ առարկաներ (գավաթներ, գավեր)՝ ոսկեգույն նախշերով։ Գտնված է նաև այդ արտադրության խոտան. դա հիմք է տալիս ասելու, որ դրանք տեղական արտադրություն են։ Սա հնագիտության համար չափազանց արժեքավոր է, որովհետև Հայաստանում այդ արտադրության գոյությունը մինչև այժմ հայտնի չէր։

Բարձրարվեստ իրերի մեծ մասը գտնվել են ստորին բերդի իշխանական ապարանքի ավերակներում։

Պեղումների ընթացքում հայտնաբերված նյութական կուլտուրայի մնացորդներն այժմ ուսումնասիրվում են և շուտով կցուցադրվեն Պետական թանգարանում։ Դվինի հնագիտական բազայում կազմակերպված է հնագիտական թանգարան, որտեղ ցուցադրված են գտնված առարկաների մի շարք նմուշներ։

Հրատարակության է հանձնված Դվինի պեղումների վերաբերյալ ծավալուն հաշվետվությունը, որը պարունակում է բազմաթիվ նկարներ և չափագրություններ։

ԴԱՄԲԱՐԱՆԱՅԻՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմական թանգարանի հնագիտական արշավախումբն ավարտեց Ախտայի շրջանի Քաղսի գյուղի «Զայնենթայ» կոչվող ձորում գտնվող դամբարանների պեղումները և էնեոլիթի (պղնձի դարի) շրջանի քաղաքատեղիի ուսումնասիրությունը։

Այս ձորում գտնվում են ավելի քան 200 դամբարաններ, որոնց մի մասը գետնադամբարաններ են, իսկ մյուս մասը դասվում է սովորական սալարկղային և քարարկղային խմբին։

Արշավախումբն այստեղ պեղեց ընդամենը 9 դամբարան, որոնցից 2-ը՝ էնոլիթի շրջանի։

Էնեոլիթի շրջանի բնակատեղիներ և հատկապես դամբարաններ Հայաստանում մինչև այժմ համեմատաբար քիչ են ուսումնասիրված։

Այդ դամբարաններն իրենց կառուցվածքով տարբերվում են բրոնզե դարաշրջանի քարարկղային տիպի գերեզմաններից։ Դամբարաններում մետաղե իրեր չեն եղել, գտնվել են սև փայլաներկով ու շեկ գույնի ամբողջական կավամաններ և նրանց զարդարուն բեկորներ, ինչպես նաև տոհմային օջախի բեկորներ։ Գտնված իրերի վրա կան նշաններ, կապված արևի պաշտամունքի հետ։ Այդ նույն նշանները մենք տեսնում ենք նաև Քաղսի գյուղի ձորում սրանից 3.500—4.000 տարի առաջ պատրաստված իրերի վրա։ Այստեղից երևում է, որ Հայաստանի նախաբնիկները նշված ժամանակաշրջանում եղել են արևապաշտներ։

Այս խմբի դամբարաններից մեկում գտնվեցին օխրայի մնացորդներ, որը հիմք է տալիս կարծելու թե ննջեցյալը, որի ոսկորները չեն պահպանվել, կարմիր գույնով է ներկած եղել։ Այդ սովորույթը կապված է կյանքի հարատևության հասկացողության հետ։ Դամբարաններից մեկում գտնվեցին